

<https://doi.org/10.46991/hc.2024.21.2.208>

Opportunities for accessibility of inaccessible heritage: international experience and the Armenian-Azerbaijani conflict

Nzhdeh Yeranyan

<https://orcid.org/0000-0003-2702-1429>

PhD, Deputy Scientific Director of the History Museum of Armenia,

Assistant of the Department of Cultural Studies at YSU

nzhdeh.yeranyan@ysu.am

Keywords: Cultural heritage, Artsakh, Syunik, Tavush, Armenian-Azerbaijani conflict

Despite various efforts aimed at preserving cultural heritage, issues in cultural heritage management become more evident in crisis situations, especially during and after armed conflicts. In recent years in the Armenian reality, the attention of responsible institutions and specialists has been focused on the problems of cultural heritage preservation in Artsakh and border settlements of Armenia, where they are under daily risk of physical destruction. However, from a professional point of view, the problem is not only the damage to the heritage but often its physical inaccessibility, which primarily leads to a break in the connection between the community and the heritage, as well as damage to the heritage. In this article, using the example of Armenia, we discuss cases when, as a result of border changes, cultural heritage becomes inaccessible to the community. Through examining international experience and legal mechanisms, we have tried to understand the possibilities and tools for its solution.

Անհասանելի ժառանգության մատչելիության հնարավորությունները. միջազգային փորձը և հայ-ադրբեջանական կոնֆլիկտը¹

Նժդեհ Երանյան

պ.գ.թ., Հայաստանի պատմության թանգարանի գիտական գծով փոխտնօրեն,

ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի ասիստենտ

¹ Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 22YR-6A010 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

History and Culture Vol.-21(2), 2024, pp.208-219.



Received: 20.09.2024

Revised: 06.10.2024

Accepted: 19.11.2024

Հիմնաբառեր՝ Մշակութային ժառանգություն, Արցախ,
Սյունիք, Տավուշ, հայ-ադրբեջանական հակամարտություն:

Չնայած մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված տարբեր ջանքերին, ճգնաժամային իրավիճակներում և հատկապես զինված հակամարտությունների ժամանակ և դրանից հետո առավել ակնհայտ են դառնում մշակութային ժառանգության կառավարման խնդիրները: Հայկական իրականությունում վերջին տարիներին պատասխանատու կառույցների և մասնագետների ուշադրությունը սեռված է Արցախում և Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին, որտեղ դրանք ֆիզիկական ոչնչացման ամենօրյա ռիսկի տակ են:

Մակայն մասնագիտական տեսանկյունից խնդիրն իրականում ոչ միայն ժառանգությանը հասցված վնասն է, այլ հաճախ դրա ֆիզիկական անհասանելիությունը, ինչը նախևառաջ համայնքի և ժառանգության կապի խզման, ինչպես նաև ժառանգության վնասման պատճառ է դառնում: Այս հոդվածում Հայաստանի օրինակով քննարկում ենք դեպքերը, երբ սահմանի փոփոխության պատճառով համայնքի համար անհասանելի է դառնում մշակութային ժառանգությունը: Միջազգային փորձի և իրավական մեխանիզմների քննության միջոցով փորձել ենք հասկանալ դրա լուծման հնարավորություններն ու գործիքակազմը:

Возможности доступности недоступного наследия: международный опыт и армяно-азербайджанский конфликт

Нжде Еранян

Кандидат исторических наук, заместитель директора по научной работе Музея истории Армении
Ассистент кафедры культурологии ЕГУ

Ключевые слова: Культурное наследие, Арцах, Сюник, Тавуш, армяно-азербайджанский конфликт:

Несмотря на различные усилия, направленные на сохранение культурного наследия, проблемы управления культурным наследием становятся более очевидными в кризисных ситуациях, особенно во время и после вооруженных конфликтов. В последние годы в армянской действительности внимание ответственных учреждений и специалистов сосредоточено на проблемах сохранения культурного наследия в Арцахе и приграничных населенных пунктах Армении, где они находятся под ежедневным риском физического уничтожения. Однако с профессиональной точки зрения проблема заключается не только в нанесении ущерба наследию, но часто и в его физической недоступности, что в первую очередь приводит к разрыву связи между общиной и наследием, а также к повреждению наследия. В этой статье на примере Армении мы обсуждаем случаи, когда в результате изменения границ культурное наследие становится недоступным для общины. Путем изучения международного опыта и правовых механизмов мы попытались понять возможности и инструменты для ее решения.

Անհասանելի ժառանգության մատչելիության հնարավորությունները. միջազգային փորձը և հայ-ադրբեջանական կոնֆլիկտը

* * *

Ներածություն: Մշակութային ժառանգության պահպանման ոլորտում վերջին տասնամյակներում աշխարհը բախվել է որոշ մարտահրավերների, որոնք հաճախ ի ցույց են դրել ժառանգության առավել արդյունավետ կառավարման և միջազգային համագործակցության անհրաժեշտությունը: Մինչ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Եվրախորհուրդը և տարբեր միջազգային կազմակերպություններ մշակութային ժառանգության պահպանությունը համարում են իրենց առաջնահերթություններից, ժառանգության կառավարման ոլորտում ճգնաժամային իրավիճակներն ամբողջ աշխարհում ցույց են տալիս կառավարման խոցելի կողմերը՝ ակնկալելով ավելի արդյունավետ միջոցներ, հատկապես ազգային մակարդակներում: Ժառանգության կառավարման խնդիրներն հատկապես ակնհայտ են դառնում, երբ բնական աղետներից զատ մշակութային ժառանգության առջև ծառացած ռիսկերը ընդգրկում են նաև զինված հակամարտությունները և քաղաքական տարբեր փոփոխություններն ու այլ ճգնաժամերը:

Հայկական իրականությունում վերջին տարիներին մշակութային ժառանգության գլխավոր խնդիրներից մեկը վերաբերում է հայ-ադրբեջանական հակամարտությամբ պայմանավորված մշակութային ժառանգության կառավարմանը: Պատասխանատու կառույցների և մասնագետների ուշադրությունը սևեռված է Արցախում և Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում մշակութային ժառանգության պահպանության խնդիրների վրա, որտեղ դրանք ֆիզիկական ոչնչացման ամենօրյա ռիսկի տակ են:

Սակայն մասնագիտական տեսանկյունից խնդիրն իրականում ոչ միայն ժառանգությանը հասցված վնասն է, այլ հաճախ դրա ֆիզիկական անհասանելիությունը, ինչը նախևառաջ համայնքի և ժառանգության կապի խզման, ինչպես նաև ժառանգության վնասման պատճառ է դառնում:

Այս հոդվածում Հայաստանի օրինակով քննարկելու ենք այն դեպքերը, երբ սահմանի փոփոխության պատճառով համայնքի համար անհասանելի է դառնում մշակութային ժառանգությունը: Այսինքն, համայնքը շարունակում է կյանքը նախկին բնակավայրում, սակայն նոր «ձևավորված» սահմանները անհասանելի են դարձնում ժառանգության հետ ամենօրյա կապը:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտությունն իրականացնելիս օգտվել ենք մշակութային մարդաբանության մի շարք մեթոդներից՝ դաշտային աշխատանք, որը ներառել է հարցազրույցներ, խորացված հարցազրույցներ և հնագիտական դաշտային հետազոտություն, գրականության միջոցով միջազգային փորձի հետ ծանոթացում, միջազգային իրավական փաստաթղթերի և կոնվենցիաների ուսումնասիրում:

Մշակութային ժառանգությունը և համայնքը.

Մշակութային ժառանգությունը ներառում է անցյալ սերունդներից ժառանգված նյութական և ոչ նյութական արժեքները, որոնք կրում են կարևոր պատմական, գեղարվեստական և սոցիալական արժեքներ [UNESCO 2003]: Մշակութային ժառանգության պաշտպանությունը կարևոր է ոչ միայն այս արժեքները պահպանելու, այլև համայնքների և անհատների ինքնության պահպանման,

սոցիալական համախմբվածությունը և կայուն զարգացումը խթանելու համար [Smith 2006, pp. 100-125]:

Ինչպես պնդում է Հարիսոնը, մշակութային ժառանգությունը կապում է անհատներին իրենց պատմության հետ՝ խթանելով պատկանելության և շարունակականության ընդհանուր զգացումը: Այս կապը կենսական նշանակություն ունի համայնքների բարեկեցության համար, քանի որ նպաստում է սոցիալական համախմբվածությանը և փոխադարձ հարգանքին [Harrison 2013, pp. 1-23]:

Հետևաբար կարևոր է ապահովել համայնքների հասանելիությունն իրենց ժառանգությանը: Երբ համայնքներն ակտիվորեն ներգրավված են իրենց մշակութային ժառանգության պահպանման և օգտագործման գործընթացներին, դա ամրապնդում է նրանց մշակութային ինքնությունը [Graham et al. 2000, pp. 20-45]: Ավելին, ժառանգության հասանելիությունը կարող է նպաստել միջմշակութային երկխոսությանը [Council of Europe 2005]:

Սակայն եթե կոնֆլիկտներով պայմանավորված, ժառանգությունը հաճախ զրկվում է հասանելիությունից:

Դիտարկելով Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային իրավիճակը և ժառանգության հասանելիության սահմանափակումները, հուշարձանները բաժանել ենք երեք խմբի.

ա. Չեզոք գոտում գտնվող և որոշակի ընթացակարգով հասանելիություն ունեցող հուշարձաններ,

բ. Հուշարձաններ, որոնք հասանելի են, սակայն դիտարկվում են հակառակորդի կողմից և վտանգավոր են հաճախակի այցելությունների և սոցիալական իրացման համար,

գ. ժառանգություն, որը «սահմանի» մյուս կողմում է և անհասանելի է:

Հայ-ադրբեջանական կոնֆլիկտը և ժառանգության սահմանափակումը.

Հայ-ադրբեջանական հակամարտությունը, որը հիմնականում կենտրոնացած է Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի վրա, ունի խորը պատմական արմատներ և նշանակալի հետևանքներ տարածաշրջանի մշակութային ժառանգության վրա: Այս հակամարտությունը, որը սրվեց 20-րդ դարի վերջին, հանգեցրեց մարդկային և մշակութային զգալի կորուստների երկու կողմերի համար: Հակամարտության ակունքները կարելի է գտնել 20-րդ դարի սկզբին, իսկ Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճերը հատկապես ցայտուն դարձան Խորհրդային Միության փլուզման ժամանակ [Cornell 1999, pp. 35-42]:

1988-ից 1994 թվականներին Լեռնային Ղարաբաղի պատերազմը և 2020 թվականի վերջին բախումները հանգեցրել են մշակութային ժառանգության բազմաթիվ օբյեկտների ոչնչացման և վնասման, լարվածության սրման և համընդհանուր խաղաղության ջանքերի բարդացման [De Waal 2003, pp. 76-82]: Այս շարունակական հակամարտության մեջ երկու կողմերն էլ միմյանց մեղադրում են ժառանգության ոչնչացման մեջ՝ որպես մշակութային վերացման միջոց: Այս հակամարտությունն էապես ազդել է ոչ միայն ժառանգության պահպանվածության վիճակի, այլ նաև դրա հասանելիության վրա:

Ելնելով հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստից, կարող ենք փաստել, որ վերջին մի քանի տասնամյակում ժառանգության սահմանափակման դեպքերը ընթացել են երկու հիմնական փուլով.

1-ին փուլ՝ 1991 – 2020 թվականներին

Անհասանելի ժառանգության մատչելիության հնարավորությունները. միջազգային փորձը և հայ-ադրբեջանական կոնֆլիկտը

2-րդ փուլ՝ 2020 թվականից հետո

1991-2020 թվականներ.

ԽՍՀՄ փլուզումից և անկախ հանրապետությունների հռչակումից հետո հանրապետությունները «գծեցին» իրենց սահմանները: Իրականում այն գրեթե ամբողջությամբ կրկնում էր Խորհրդային միության տարիների սահմանները:

Հայաստանի պարագայում Թուրքիայի և Իրանի սահմանագծերի հետ փոփոխություն չեղավ: Չնայած սահմանների այս հատվածում ևս առկա են ժառանգության օբյեկտներ, որոնց հասանելիությունը որոշակի սահմանափակումներ ունի¹, այնուամենայնիվ, այս հոդվածում քննարկել ենք միայն այն դեպքերը, երբ ժառանգությունը անհասանելի է դարձել հայ-ադրբեջանական կոնֆլիկտից հետո:

Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների հետ առանց մեծ հստակեցումների և սահմանազատման, բայց այնուամենայնիվ տեղի ունեցավ որոշակի սահմանագծման գործընթաց:

Արդյունքում, ժառանգության որոշ օբյեկտներ անհասանելի դարձան հայ-վրացական և հայ-ադրբեջանական սահմանի տարբեր հատվածներում²:

Պայմանավորված դարաբաղյան հակամարտության բնույթով, հայ ադրբեջանական սահմանի տարբեր հատվածներում անհասանելի դարձած ժառանգության օբյեկտների թիվն ավելի մեծ և բազմազան է:

Մասնավորաբար՝ դժվար հասանելի դարձան Ոսկեպար գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին և Չինարի գյուղում գտնվող Խորանաշատ վանքը, որոնք գտնվում են հակառակորդի ուղիղ դիտարկման տակ: Ընդ որում, Ոսկեպարի Մբ. Աստվածածին եկեղեցին, եթե մինչև 2024 թվականի Հայաստանի և Ադրբեջանի սահմանների մասնակի սահմանազատման գործընթացը գտնվում էր դիտարկման տակ և այցելելը վտանգավոր էր, ապա դրանից հետո թեև գտնվում է Հայաստանի տարածքում և դիտարկման վտանգն արդեն չկա, բայց գտնվում է սահմանային ուղեկալից այն կողմ և դարձել է մասամբ հասանելի և հարկավոր է թույլտվություն այնտեղ հասնելու համար:

Հակամարտության պատճառով անհասանելի է դարձել Ղազախի շրջանի Գազա Մբ. Սարգիս եկեղեցին¹, Կոթի գյուղի որոշ սրբատեղիներ, Հայաստանի էքսկլավ և ամբողջությամբ դատարկված

¹ «Արտաշատ մայրաքաղաք» հնավայրի զգալի մասը, Երվանդաշատ հնավայրը, Շուշանիկի վանքը գտնվում են սահմանապահների ուղեկալից այն կողմ և նշված հուշարձաններ հասնելը պահանջում է որոշակի գործընթաց և թույլտվություն:

² Հայ-վրացական սահմանին նման օբյեկտների թիվը մեծ չէր: Այստեղ մասամբ անհասանելի դարձավ Լոռու և Տավուշի մարզերի բուֆերային գոտու մի քանի հուշարձան, ինչպես օրինակ Խուճապի վանքը, Չաղալաբերդը, ինչպես նաև Դեբեդի հովտում գտնվող բազմաթիվ նախաքրիստոնեական հուշարձաններ՝ պալեոլիթյան և բրոնզեդարյան դամբարաններ և բնակատեղիներ: Այս հուշարձանները կարելի է դասել 1-ին տիպի հուշարձանների խմբին, քանի որ մասամբ են հասանելի և հարկավոր է մուտքի թույլտվություն ունենալ՝ ԱՄԾ սահմանապահ ուղեկալն անցնելու համար: Նշված տարածքներ այցելությունը սահմանափակված, սակայն անհնար չէ: Այնուամենայնիվ, վերջիններս անհասանելի են հասարակության առօրյա կարիքները բավարարելու (ժամերգություն, մատաղ, հարսանիք և այլ ծեսեր) գործառնությամբ կատարելու համար:

Արծվաշեն գյուղի գերեզմանոցը, Զուխտակ մատուռը, Մր. Մինաս եկեղեցին, Այունց թաղամասի մատուռը, «Խաչի դուռ» սրբատեղին, մշակույթի տունը և գրադարանը:

Սահմանային այս փոփոխությունների արդյունքում 1991 թվականից հետո հայ-ադրբեջանական սահմանի երկու կողմի բնակավայրերի նախկին բնակիչների համար անհասանելի դարձան նաև տարբեր բնակավայրերում գտնվող գերեզմանոցներ:

Խորհրդային տարիներին հայ և ադրբեջանցի ժողովուրդների մեջ ժամանակի ընթացքում ժողովրդական մշակույթում ձևավորվել էր համակեցության մի մակարդակ՝ համատեղ սրբավայրերի գործառության դրսևորմամբ: Հետագոտության ընթացքում վավերացվել են ժառանգության որոշ օբյեկտներ, որոնք գտնվում են Հայաստանի տարածքում և այս սահմանային փոփոխությունների արդյունքում անհասանելի դարձան ադրբեջանցիների համար: Մասնավորաբար, Ոսկեպար գյուղի տարածքում վավերացրել ենք մի հուշարձան, որը տեղացիներն անվանում էին «թուրքի խաչ»: Այն իրենից ներկայացնում է ուղղահայաց կանգնեցված քար, որը խորհրդային տարիներին ուխտատեղի է եղել ինչպես հայերի, այնպես էլ հարևան գյուղերի ադրբեջանցիների համար: Այստեղ տարբեր անձնական և ընտանեկան առիթներով մատաղ և այլ ծես են իրականացրել շրջակա բնակավայրերի հայ և ադրբեջանցի բնակիչները:

Ժառանգության համատեղ օգտագործման և այժմ անհասանելիության իրավիճակներ ենք հանդիպում նաև Մեղրիի շրջանում, օրինակ Բուղաքարի (Բողաքարի) փիրը՝ Մեղրու տարածաշրջանի Լեհվազ գյուղից մոտ 8 կմ հյուսիս-արևմուտք, սուրբ, որը հավանաբար կառուցվել է 19-րդ դարավերջին կամ 20-րդ դարի սկզբին, առաջին անգամ հիշատակվում է Մշակ թերթի 1913 թ. N 155 համարում, հավանաբար կառուցված լինելով տեղի մահմեդականների կողմից, համատեղ օգտագործվել է նաև հայերի կողմից՝ հիմնականում ուխտի գնալու և մատաղ անելու նպատակով [Խառատյան, Հակոբյան 2019, 77-96]: Փաստորեն սահմանների սահմանափակումներից հետո տեղի մահմեդականները այլևս հասանելիություն չունեն այդ սրբին:

Նման դեպքի մեկ այլ օրինակ է «Բաբա Հաջ» սրբավայրը, որը թե հակամարտային ու համակեցական պատումների, թե ժողովրդական հավատալիքների ու արարողակարգերի և սոցիալական գործառնության առումով հետաքրքիր շերտեր է պարունակում: Այն գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Շվանիձոր գյուղի վարչական տարածքում, Շվանիձորից 6 կմ հյուսիս, Նոնաձոր

¹ Այն թեև գտնվում Ադրբեջանի տարածքում, սակայն, ինչպես հարցազրույցների ժամանակ նշեցին Տավուշի մարզի որոշ բնակավայրերի բնակիչներ, խորհրդային տարիներին հաճախ էին լինում դեպքեր, երբ գյուղացիները «ուխտի» էին գնում այնտեղ՝ մատաղ անելու կամ որևէ նշանակալի իրադարձություն նշելու [մանրամասն տես՝ Կարապետյան, 2004, էջ 440-443]: Ընդ որում, Բերքաբեր գյուղի տարածքից իրականացված մեր դիտարկումները, ինչպես նաև արբանյակային լուսանկարների համադրումը ցույց տվեցին, որ եկեղեցու մոտ՝ հարավ-արևելյան հատվածում, ադրբեջանցիների կողմից կառուցվել է հրետանու հենակետ (նկ. 4), ինչը «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թվականի կոնվենցիան նշում է, որ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են հարգել իրենց, ինչպես նաև մյուս կողմերի տարածքներում գտնվող մշակութային արժեքները՝ արգելելով այդ արժեքների, դրանց անմիջական շրջակայքի և պաշտպանական կառույցների օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք զինված ընդհարման դեպքում կարող են հանգեցնել այդ արժեքների ավերմանը կամ վնասվելուն, և ձեռնպահ մնալով այդ արժեքների դեմ ուղղված թշնամական որևէ գործողությունից» [Hague Convention 1954, Article 4]:

Անհասանելի ժառանգության մատչելիության հնարավորությունները. միջազգային փորձը և հայ-ադրբեջանական կոնֆլիկտը

(Նյուվադի) գյուղից՝ 8,5 կմ հյուսիս-արևմուտք, Բոլիշեն հանդամասի հարակից անտառակում: Սրբավայրի՝ հայերի և թուրքերի կողմից համատեղ օգտագործման առաջին վկայությունները կան 1926 թ. Ս. Լիսիցյանի մոտ: Այն շարունակեց համատեղ օգտագործվել նաև խորհրդային տարիներին [Խառատյան, Հակոբյան 2019, 99-113]՝ չնայած խորհրդային ընդգծված հակակրոնական քաղաքականությանը անգամ կրոնական ծեսերի դեմ [մանրամասն տես՝ Խառատյան, Հակոբյան 2019, 115-118]:

2020 թվականից հետո.

Հուշարձանների հասանելիության առավել մեծ խնդիրներ առաջացան 2020 թվականի 44 օրյա պատերազմից և նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ փաստաթղթից հետո, որի արդյունքում տեղի ունեցան սահմանային փոփոխություններ, իսկ ավելի ուշ նաև ադրբեջանական ուժերի ներխուժում Հայաստանի սահմաններից ներս, ինչի պատճառով վնասներ կրեց նաև մշակութային ժառանգությունը, որոշ օբյեկտներ դարձան անհասանելի: Դրանցից են՝ Գորիսի շրջանում՝ Սիրիջի բերդը, Խոզնավարի վիշապաքարը, Կոռնիձորի Սոփի եղջին, Քարահունջի հնձանները, երկու հին բնակավայր Հարթաշենում (Ղյուլիշեն)՝ Կյորու և Մադանջուղ, Կապանի շրջանում՝ Ներքին Հանդի հին գյուղատեղին և եկեղեցին, Սոսու պուրակը, Սիսիանի շրջանում՝ Իշխանասարի ժայռապատկերները:

Դիրքապահների և տեղի բնակիչների հետ զրույցներում պարզել ենք, որ որոշ խաչքարեր գտնվում են չեզոք գոտում և այսուհետև ևս անհասանելի են:

Անհասանելի մշակութային ժառանգության մատչելիության հնարավորությունները. միջազգային փորձը.

Թեմայի ուսումնասիրությունը ցույց է տվեց, որ խնդիրը, երբ սահմանային փոփոխություններն ազդել են ժառանգության հասանելիության վրա, ունի այլ զուգահեռ օրինակներ ևս:

Այսպես՝ 1974 թվականին Հունաստանի և Թուրքիայի միջև հակամարտությունից հետո Կիպրոսի բաժանումը Կիպրոսի հունական հարավի և Կիպրոսի թուրքական հյուսիսի, հանգեցրեց սահմանի երկու կողմերում գտնվող բազմաթիվ անհատների համար մշակութային ժառանգության օբյեկտների ֆիզիկական անհասանելիությանը: Հատկանշական օրինակներից է հին Ֆամագուստա քաղաքը, որը գտնվում է Կիպրոսի՝ թուրքերի կողմից վերահսկվող մասում և անհասանելի Կիպրոսի հույների համար [տես՝ Walsh 2009, pp. 77-79]:

Հետաքրքիր է Քաշմիրի դեպքը: Հնդկաստանի և Պակիստանի միջև Քաշմիրի շրջանի շուրջ տարածքային վեճը հանգեցրել էր մշակութային ժառանգության վայրերի ֆիզիկական անմատչելիությանը վերահսկողության գծի երկու կողմերում ապրող շատ մարդկանց համար: Սա ներառում է այնպիսի վայրեր, ինչպիսիք են պատմական Մուզաֆարաբադ (Muzaffarabad) քաղաքը և Մարտանդ Սուն (Martand Sun) տաճարի հնագույն ավերակները, որոնք գտնվում են Պակիստանի կողմից կառավարվող Քաշմիրում և անհասանելի են շատ հնդիկների համար [Bose 2007, pp. 156-157]:

Իսրայելա-պաղեստինյան շարունակվող հակամարտությունը ևս հանգեցրել է մշակութային ժառանգության օբյեկտների ֆիզիկական անհասանելիությանը երկու կողմերի բնակչության,

ինչպես նաև Հորդանան գետի Արևմտյան ափում և Գազայում ապրող պաղեստինցիների համար՝ Իսրայելի իշխանությունների կողմից կիրառվող տեղաշարժի սահմանափակումների պատճառով: Այն վայրերը, ինչպիսիք են Երուսաղեմի Հին քաղաքը և հնագույն Հեբրոն քաղաքը, ենթակա են մուտքի տարբեր սահմանափակումների՝ ազդելով մարդկանց՝ իրենց մշակութային ժառանգության հետ առնչվելու վրա [Yacobi 2009, pp. 81-83]:

Հյուսիսային և Հարավային Կորեաների միջև ապառազմականացված գոտի (DMZ) ստեղծելուց հետո ևս կան մշակութային ժառանգության վայրեր, որոնք ֆիզիկապես անհասանելի են քաղաքացիական անձանց համար: Օրինակ, Կոգուրյո դամբարանները, որոնք ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտներ են, գտնվում են այս ապառազմականացված գոտում և անհասանելի են հանրության համար: Այս վայրերը ներկայացնում են նշանակալի հնագիտական և մշակութային ժառանգություն, սակայն նրանց գտնվելու վայրը խիստ ամրացված գոտում սահմանափակում է մուտքը պահպանման և հետազոտական նպատակների համար [Kim 2006, p. 96].

Սակայն տարբեր իրավիճակներում ստեղծվել են հանգամանքներ, որոնք թույլ են տվել սահմանի այս կամ այն կողմում հայտնված համայնքին հաղորդակից լինել իր ժառանգությանը: 1974 թվականին Հունաստանի և Թուրքիայի միջև հակամարտությունից հետո Կիպրոսի բաժանումը հանգեցրեց կղզու հյուսիսային մասում միջազգայնորեն չճանաչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության (ՀԿԹՀ) ստեղծմանը: Այնուամենայնիվ, ստեղծվել են այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են ՄԱԿ-ի կողմից վերահսկվող բուֆերային գոտին և անդրսահմանային նախաձեռնությունները, որոնք հեշտացնում են դեպի որոշակի մշակութային ժառանգության վայրեր ինչպես հույների, այնպես էլ կիպրացի թուրքերի համար: Օրինակ, Կիպրոսի Անհայտ կորածների հարցերով կոմիտեն (Committee on Missing Persons in Cyprus - CMP) իրականացրել է արտաշիրիմում և նույնականացման աշխատանքներ բուֆերային գոտում՝ լուծելու երկու համայնքներից անհայտ կորածների հումանիտար խնդիրը՝ միաժամանակ հեշտացնելով մուտքը գոտում գտնվող մշակութային ժառանգության վայրեր:

1947 թվականին գծված սահմանը Հնդկաստանի և Պակիստանի միջև հանգեցրեց միլիոնավոր մարդկանց տեղահանմանը և մշակութային ժառանգության օբյեկտներից բաժանմանը: Օրինակ, հնագույն Լահոր քաղաքը, որը պատմականորեն կարևոր էր ինչպես հինդու, այնպես էլ սիկհերի համայնքների համար դարձավ Պակիստանի մի մասը, մինչդեռ շատ հինդուներ և սիկհեր գաղթեցին Հնդկաստան: Չնայած սահմանին, այնպիսի մեխանիզմներ են ստեղծվել, ինչպիսիք են վիզաների համաձայնագրերը և մշակութային փոխանակման ծրագրերը, որոնք դուրսացրել են սահմանի հակառակ կողմում գտնվող կրոնական վայրեր այցելությունները ուխտագնացության և մշակութային նպատակներով: Արդյունքում, Հնդկաստանից սիկհ ուխտավորները կարող են այցելել Պակիստանի Գուրդվարա Քարտարպուր Սահիբի սուրբ վայրը՝ 2019 թվականին բացված հատուկ միջանցքով [Kartarpur corridor 2019]:

Անհասանելի ժառանգության մատչելիության ապահովման յուրօրինակ, սակայն ոչ շարունակական փորձ կիրառվեց Արցախում, երբ 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո անհասանելի դարձավ մշակութային ժառանգության մի զգալի մասը, որի պատճառով հայ քրիստոնյաների համար անհասանելի դարձավ Դադիվանք այցելությունը ևս: Սակայն պայմանավորվածության համաձայն՝ յուրաքանչյուր կիրակի հայ ուխտավորների մեկ

Անհասանելի ժառանգության մատչելիության հնարավորությունները. միջազգային փորձը և հայ-ադրբեջանական կոնֆլիկտը

կամ երկու խումբ՝ միկրոավտոբուսով, ռուս խաղաղապահների ուղեկցությամբ՝ ուղևորվում էր Դադիվանք՝ պատարագ իրականացնելու համար [տես՝ Gowan 2022, 528]: Ցավոք, այս ծրագիրը շարունակական չէր և ուխտագնացությունը Դադիվանքի դեպքում երկար չտևեց: Իսկ 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայից հետո հայերը բռնի տեղահանվեցին Արցախից:

Ղարաբաղյան հակամարտության համատեքստում հայ-ադրբեջանական պայմանավորվածության և ժառանգության ոչ մատչելիության, սակայն խնամքի և հարգանքի հետաքրքիր դեպք է հանդիպում Քերքենջ և Ղզլ Շաֆաք գյուղերի օրինակով: 1989 թվականին Ադրբեջանական Քերքենջ գյուղի հայ և Հայաստանի Ղզլ Շաֆաք գյուղում բնակվող ադրբեջանցիների մեջ լուրջ պայմանավորվածության համաձայն՝ գյուղերը փոխանակվել են: Հայ փախստականները զբաղեցնում են ադրբեջանաբնակ Ղզլ Շաֆաք գյուղը, իսկ ադրբեջանցիները՝ հայաբնակ Քերքենջը: Ինչպես նշել են հարցվողները, ամենադժվարը եղել է նախնիների գերեզմանները թողնել և գալը: Այնուամենայնիվ տեղափոխումը տեղի է ունեցել: Այժմ իհարկե գերեզմաններն անհասանելի են երկու կողմի համար էլ, սակայն ինչպես նշում են նախկին Քերքենջցիները, նրանք անվնաս պահում են ադրբեջանցիների գերեզմանները՝ իրենց գերեզմանների նկատմամբ նույն վերաբերմունքի ակնկալիքով [Hakobyan 2011, pp. 429-447].

Իրավական կարգավորումները.

Մի շարք միջազգային իրավական մեխանիզմներ, կոնվենցիաներ և փաստաթղթեր նպատակ ունեն հեշտացնել մշակութային ժառանգության պահպանությունը և հասանելիությունը հակամարտության գոտիներում կամ պատերազմական իրավիճակներում, որտեղ մշակութային ժառանգության վայրերը կարող են ֆիզիկապես անհասանելի լինել: Ահա մի քանի ուշագրավ օրինակներ.

«1954 թ. Հաագայի կոնվենցիան Ջինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» նպատակ ունի պաշտպանել մշակութային ժառանգությունը պատերազմի և հակամարտությունների ժամանակ: Այն սահմանում է մշակութային արժեքների պաշտպանության կանոններ՝ ներառյալ դրանց ոչնչացումը, թալանն ու ապօրինի շրջանառությունը կանխելու միջոցներ: Կոնվենցիան նախատեսում է նաև պաշտպանական միջոցների սահմանում, ինչպիսիք են պահպանվող գոտիների ստեղծումը և մշակութային արժեքների նույնականացման համար տարբերակիչ նշանների օգտագործումը: Կոնվենցիան և դրա երկու արձանագրությունները ընդգծում են մշակութային ժառանգության հարգման կարևորությունը նույնիսկ զինված հակամարտությունների պայմաններում [Hague Convention 1954]:

1972 ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պաշտպանման կոնվենցիան» նպատակ ունի բացահայտել, պաշտպանել և պահպանել ակնառու համընդհանուր արժեք ներկայացնող մշակութային և բնական ժառանգությունը: Այն սահմանում է միջազգային շրջանակ՝ համաշխարհային ժառանգության օբյեկտների նշանակման և կառավարման համար, որոնք ճանաչվում են իրենց մշակութային, պատմական կամ բնական

նշանակությամբ: Կոնվենցիան խրախուսում է միջազգային համագործակցությունը Համաշխարհային ժառանգության օբյեկտների պաշտպանության և պահպանման համար, ներառյալ կոնֆլիկտային գոտիներում կամ քաղաքական անկայունության վայրերում [UNESCO 1972]:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնարարական՝ նվիրված թանգարանների և հավաքածուների պաշտպանությանն ու խրախուսմանը, դրանց բազմազանությանը և հասարակության մեջ նրանց դերին (հղում) ընդգծում է թանգարանների և մշակութային հաստատությունների կարևորությունը՝ որպես մշակութային ժառանգության պահպանման և կոչ է անում նրանց պաշտպանել և աջակցել նույնիսկ դժվարին հանգամանքներում [UNESCO 2015]:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևեր. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը մի քանի բանաձևեր է ընդունել, որոնք ուղղված են հակամարտությունների գոտիներում մշակութային ժառանգության պաշտպանությանը: Օրինակ, 2347 (2017) բանաձևը ընդգծում է մշակութային ժառանգությունը ահաբեկչական խմբավորումների կողմից ոչնչացումից և կողոպուտից պաշտպանելու կարևորությունը [UN Security Council Resolution 2347 2017], մինչդեռ 2199 [UN Security Council Resolution 2199 2015] բանաձևը դատապարտում է հակամարտությունից տուժած երկրներից մշակութային արժեքների ապօրինի շրջանառությունը՝ պատժամիջոցներ կիրառելով անհատների և կազմակերպությունների նկատմամբ, որոնք ներգրավված են դրանում:

Կարմիր Խաչի և Կարմիր մահիկի շարժում. Կարմիր Խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) և Կարմիր Խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիան (IFRC) աշխատում են պաշտպանելու մշակութային արժեքները զինված ընդհարումների և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ: Նրանք ուղղորդում և աջակցություն են տրամադրում՝ ապահովելու մշակութային ժառանգության պահպանությունը, այդ թվում՝ հումանիտար աշխատողների համար վերապատրաստման ծրագրերի և մշակութային ժառանգության կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով:

Եզրակացություններ: Ինչպես տեսնում ենք, հայ-ադրբեջանական հակամարտության պատճառով մշակութային ժառանգությունը ամենամեծ վնաս կրած ոլորտներից մեկն է: Արդյունքում ոչ միայն վնասվել, այլ նաև անհասանելի են դարձել ժառանգության բազմաթիվ օբյեկտներ, ինչն էլ իր հերթին պատճառ է դարձել հասարակության ինքնության աղավաղմանը և ճգնաժամի խորացմանը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նմանատիպ դեպքեր գրանցվել են տարբեր հակամարտությունների ժամանակ նույնպես: Եվ չնայած մշակութային ժառանգության պահպանությանը նվիրված որոշ միջազգային կոնվենցիաներին և կարգավորումների առկայությանը, դրանք չեն սահմանում ժառանգության հասանելիության հնարավորությունները: Եղած միջազգային կարգավորումները վերաբերում են ավելի շատ շարժական կամ անշարժ ժառանգության պաշտպանությանը:

Սակայն հանդիպում ենք մի շարք հաջողված օրինակներ, ինչպես միջազգային պրակտիկայում, այնպես և հայ-ադրբեջանական համակարտության համատեքստում, երբ լոկալ պայմանավորվածությունները նպաստել են ժառանգության հասանելիությանը:

Այսպիսով տեսնում ենք, որ չնայած միջազգային իրավական դաշտն այս հարցում դեռ հստակ լուծումներ չի տալիս, սակայն կան բազմաթիվ օրինակներ ինչպես միջազգային այնպես և մեր իրականության մեջ, որոնք ցույց են տալիս, որ տեղական լոկալ պայմանավորվածությունների և

Անհասանելի ժառանգության մատչելիության հնարավորությունները. միջազգային փորձը և հայ-ադրբեջանական կոնֆլիկտը

բանակցությունների արդյունքում հնարավոր է ապահովել որոշակի խմբի մարդկանց մուտքը հատուկ գոտիներ՝ ուխտագնացության կամ այլ կրոնական նպատակներով:

«Հայաստանի և Ադրբեջանի սահմանագատման հանձնաժողովների համատեղ գործունեության կանոնակարգ»-ի Հոդված 4-ի 4-րդ կետում նշվում է, որ «Սահմանագատման աշխատանքներն իրականացնելիս Հանձնաժողովները կարող են դիտարկել սահմանագծի անցման օպտիմալացման հնարավորություններ և համաձայնեցնել գործընթացի չափանիշներն ու ձևերը պաշտամունքային նշանակության օբյեկտների, գերեզմանատների, մշակութային և պատմական ժառանգության պահպանության նպատակներով» [Կանոնակարգ 2024, 4]: Իհարկե, այստեղ խոսք չկա արդեն անհասանելի դարձած ժառանգության հետագա կառավարման և մատչելիության ապահովման մասին, սակայն նշված կետը հուշում է, որ կարելի է ակնկալել, որ սահմանագատման հետագա աշխատանքների ժամանակ ժառանգության օբյեկտներին հնարավոր է առավել մեծ ուշադրություն կդարձվի:

Մշակութային ժառանգությունը և դրա մատչելիությունը այն կարևոր հարթակներից են, որոնք նպաստում են խաղաղությանը [տես օրինակ՝ Walters 2014, pp. 95-105]: Հետևաբար կարևոր է դրանց մատչելիության ապահովումը՝ հետագա խաղաղության ակնկալիքով:

Գրականության ցանկ

Խառատյան Լ., Հակոբյան Ա. 2019, Դրվագներ Հայաստանի խորհրդային անցյալից. Հայ ադրբեջանական համակեցության հետքերով, Երևան:

Կանոնակարգ 2024, Կառավարությունը հաստատեց Հայաստանի և Ադրբեջանի սահմանագատման հանձնաժողովների համատեղ գործունեության կանոնակարգը. այն կուղարկվի ՄԴ, <https://armenpress.am/hy/article/1199079>.

Bose, Samantra 2007, Contested Lands: Israel–Palestine, Kashmir, Bosnia, Cyprus and Sri Lanka, Harvard University Press, London.

Committee on Missing Persons in Cyprus. <https://www.cmp-cyprus.org/phase-1-investigation/>.

Cornell, Svante 1999, The Nagorno-Karabakh Conflict, Middle Eastern Studies, 35(4), pp. 35-42.

Council of Europe 2005, Framework Convention on the Value of Cultural Heritage for Society (Faro Convention), <https://www.coe.int/en/web/culture-and-heritage/faro-convention>.

De Waal, Thomas 2003, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War. NYU Press, New York.

Gowan, Richard 2022, Peace Operations and the Protection of Cultural Heritage Richard Gowan, 528, pp. 517-530, in the book- Cultural Heritage and Mass Atrocities (edited by Cuno J., Weiss Th.) Getty Publications, Los Angeles.

Graham, Brian; Ashworth, Gregory John; Tunbridge, John 2000, A Geography of Heritage: Power, Culture, and Economy, London & New York: Arnold.

Hague Convention 1954, Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, <https://en.unesco.org/themes/protecting-heritage/1954-hague-convention>.

Hakobyan, Arsen 2011, Anthropology of ethnic conflict in the context of everyday life (a case of the settlements exchange during the Nagorno-Karabakh conflict), *Acta Ethnographica Hungarica*, 56 (2), 429–447, DOI: 10.1556/AEthn.56.2011.2.10

Harrison, Rodney 2013, *Heritage: Critical Approaches*, London & New York, Routledge.

Kartarpur corridor 2019, Kartarpur corridor: India pilgrims in historic visit to Pakistan temple, <https://www.bbc.com/news/world-asia-india-50342319>.

Kim, Samuel 2006, *The Two Koreas and the Great Powers*, Cambridge, Cambridge University Press.

Smith, Laurajane 2006, *Uses of Heritage*, London & New York, Routledge.

UN Security Council Resolution 2199 2015, Resolution 2199 on the Illicit Trade in Cultural Property from Conflict Zones, [https://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/2199\(2015\)](https://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/2199(2015)).

UN Security Council Resolution 2347 2017, Resolution 2347 on the Protection of Cultural Heritage in Conflict Zones, [https://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/2347\(2017\)](https://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/2347(2017)).

UNESCO 1972, Convention Concerning the Protection of the World Cultural and Natural Heritage, <https://whc.unesco.org/en/conventiontext/>

UNESCO 2003, Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, <https://ich.unesco.org/en/convention>

UNESCO 2015, Recommendation Concerning the Protection and Promotion of Museums and Collections, their Diversity and their Role in Society, <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000231871>.

Walsh, Michael 2009, Cyprus and the Politics of Memory: History, Community, and Conflict", *History & Memory*, Volume 21, Issue 2, pp. 75-99.

Walters, Diana 2014, "We shall never forget, but cannot remain forever on the battlefield": Museums, Heritage and Peacebuilding in the Western Balkans, *Displaced heritage responses to disaster, trauma, and loss* (Ed. Stone P. G., Davis P., Whitehead Ch.), NY, 95-105.

Yacobi, Haim 2009, *The Jewish-Arab City: Spatio-politics in a Mixed Community*, London&New York, Routledge.